

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում  
2015-2016 թվականների

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրավահավասար գործընկերության և հարգանքի հիման վրա հետագա համագործակցության ընդլայնման նպատակով,

ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի և Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարարության միջև 2006 թվականի հոկտեմբերի 24-ին Երևան քաղաքում կնքված համագործակցության համաձայնագրին համապատասխան՝

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարարության միջև մշակվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում 2015-2016 թվականների համագործակցության ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր):

### Նպատակներն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում փոխհեռավոր համագործակցության զարգացմանն ուղղված մի շարք համալիր միջոցառումների իրագործումը ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար քաղաքացիների հավասար իրավունքներ ապահովելու, բարձրակարգ մարզիկներ պատրաստելու համակարգ ու միջազգային մարզական միջոցառումների համար մարզական հերթափոխ ստեղծելու, ինչպես նաև մարզաբազաներն արդյունավետ օգտագործելու համար:

Ծրագրի իրականացումը նախատեսում է երկու երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական կառավարման մարմինների, հասարակական և սարաձաբջանային մարզական կազմակերպությունների, ինչպես նաև մարզական ուղղվածության ուսումնական, գիտական, բժշկական հիմնարկների համագործակցությունը՝ ապահովելու համար՝

ԱՊՀ մասնակից պետությունների մինչև 2020 թվականն ընկած ժամանակամիջոցի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ուղղվածության իրականացմանն ուղղված 2013-2015 թթ. միջոցառումների ծրագրի կառավարմը.

Ռիո դե Ժանեյրոյի (Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն) 2016 թ. XXXI օլիմպիադայի խաղերին Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության օլիմպիական մարզաբազաներում մարզածների ազգային հավաքական թիմերի նախապատրաստական եզրափակիչ փուլը:

### Պետական կառավարման մարմինների մակարդակի միջոցառումներ

Սույն Ծրագրի իրագործման շրջանակներում նախատեսվում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական կառավարման մարմինների մակարդակով հետևյալ միջոցառումների իրականացումը՝

1. Յալթայում (Ռուսաստան) 2007 թ. մայիսի 25-ին ստորագրված ԱՊՀ մասնակից պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմանների իրականացումը, այդ թվում՝

Համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության տարածքում մարզական միջոցառումների անցկացում.

տարբեր մարզածներից համատեղ ուսումնամարզական հավաքների կազմակերպում մանուկների և պատանիների համար Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության մարզաբազաներում.

համաձայնեցված ֆադախականության վարում միջազգային կազմակերպություններում և մարզածների փեդերացիաներում թեկնածուներ առաջադրելիս.

մասնակցություն մասսայական և մանկապատանեկան սպորտի զարգացման ոլորտում փորձի փոխանակմանն ուղղված, բնակչության տարբեր շերտերի հետ ֆիզիկուլտուրային-մարզական աշխատանքների ակումբային համակարգի կազմակերպման զարգացման օպտիմալացման, ինչպես նաև հաշմանդամային սպորտի հարցերի վերաբերյալ սեմինարներին և համաժողովներին.



2. Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ազգային և հավաքական թիմերի մասնակցություն էրկու էրկրների տարածքում անցկացվող պատանական միջազգային մրցումներին և մեծահասակների, ինչպես նաև երիտասարդների և պատանիների Բելառուսի և Հայաստանի բաց առաջնություններին:

3. Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակությունների մասնակցություն էրկու էրկրներում անցկացվող պատանական մարզական զանգվածային միջոցառումներին:

4. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարարության ղեկավարության և մասնագետների խորհրդակցությունների անցկացում հետևյալ հարցերի շուրջ.

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության օրենսդրությունների կատարելագործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում.

մարզածևերի ազգային թիմերի մարզական միջոցառումների, զանգվածային ֆիզիկուլտուրային աշխատանքի կազմակերպման, մարզակառույցների շինարարության և շահագործման ֆինանսավորում:

սպորտում դոպինգի դեմ պայքարի ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային կոնվենցիայի դրույթների կիրառում և Միջազգային հակադոպինգային գործակալության (WADA) հետ համագործակցություն:

**Համագործակցություն ուսումնական հաստատությունների միջև և  
մանկավարժական գործունեություն**

Սույն Ծրագիրը նախատեսում է էրկու էրկրների մարզական ուղղվածության ուսումնական հաստատությունների միջև համագործակցություն, որը կիրականացվի հետևյալ միջոցառումների շրջանակներում:

Հայաստանի մասնագետների մասնակցություն՝

երիտասարդ գիտնականների միջազգային գիտագործնական կոնֆերանսին (Բ. Մինսկ, Բելառուսի ֆիզիկական կուլտուրայի պետական համալսարան (այսուհետ՝ ԲՖԿՊՀ) 2015-2016 թթ. ապրիլ, մայիս).

ԲՅԿՊՀ-ի մասնագետների, ուսանողների և ասպիրանտների մասնակցությունը Հայաստանի մարզական ուղղվածության ուսումնական հաստատությունների բազայի հիման վրա անցկացվող միջազգային գիտական կոնֆերանսներին, սեմինարներին.

տարբեր մարզածիւրից համատեղ ուսումնամարզական հավաքների կազմակերպում Հայաստանի և Բելառուսի օլիմպիական երրօրյա խմբի ֆուտբոլիստների սպորտդոկտորների մասնակցությամբ.

Հայաստանի մարզիչ-մանկավարժների որակավորման բարձրացման կազմակերպում մեծահասակների համալրացուցիչ կրթության «Մարզիչների բարձրագույն դպրոց» ղեկավար աշխատողների և մասնագետների որակավորման բարձրացման կենտրոնում, «Բելառուսի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարան» կրթական հաստատությունում.

սպորտային գիտության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների որակավորման բարձրացման հարցերին անցվող տպագիր և էլեկտրոնային կրիչներով նյութերի փոխանակում:

#### **Համագործակցություն սպորտային գիտության, սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության բնագավառում**

Մրցարի Երջանակներում կիրականացվի համագործակցություն սպորտային գիտության, սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության բնագավառում, այն է՝

սպորտային բժշկության մասնագետների, մարզիչների, գիտաաշխատողների գործնական հանդիպումների անցկացում (ըստ պայմանավորվածության).

երկու երկրների մասնագետների մասնակցություն սպորտային բժշկության, դոպինգային հսկողության հարցերի վերաբերյալ համատեղ սեմինարներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին, ինչպես նաև Բելառուսի և Հայաստանի ազգային թիմերի մարզիկների գիտա-բժշկական հետազոտության համատեղ անցկացում՝ ուսումնամարզական հավաքների ժամանակ նրանց պատրաստման մակարդակը բարձրացնելու նպատակով.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարարության կողմից հյատարակված տեղեկագրերի, տեղեկատվական նյութերի փոխանակում.



Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի վերաբերյալ միջազգային կոնֆերանսների, գիտաժողովների արդյունքների հիման վրա գիտական աշխատությունների ժողովածուներում գիտական աշխատանքների հրատարակում:

### Սպորտային փոխանակումներ

Կողմերը կեարունակեն շփումը մարզածիների ազգային ֆեդերացիաների մակարդակով: Մարզական միջոցառումներն անցկացնելու վայրերը և ժամկետները լրացուցիչ կհամաձայնեցվեն և կարող են ձևակերպվել առանձին արձանագրությամբ:

Կողմերը հաստատում են, որ մարզական փոխանակումները կիրականացվեն մարզածիների ֆեդերացիաների, երկու երկրների տարածքային և տեղական կառավարման մարմինների միջև անմիջական պայմանավորվածությունների հիման վրա:

Սույն Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար ֆինանսական պայմանները կհամաձայնեցվեն Կողմերի միջև առանձին:


Ստորագրված է 2015 թ. վետրվարի 18-ին Բ. Մինսկում երկու բնօրինակով՝ հայերենով և ռուսերենով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

**Հայաստանի Հանրապետության  
սպորտի և երիտասարդության հարցերի  
նախարարության կողմից՝**



---

**Բելառուսի Հանրապետության  
սպորտի և տուրիզմի նախարարության  
կողմից՝**



---